

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի ազգային ագրարային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը (այսուհետ՝ բաժին) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումն է՝ լրատվական միջոց, որը ստեղծվել է ՀԱԱՀ-ի խորհրդի որոշմամբ:

1.2 Իր գործունեության ընթացքում բաժինը ղեկավարվում է «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին ՀՀ օրենքով», ՀԱԱՀ-ի և սույն կանոնադրություններով:

1.3 Բաժնի իրավաբանական հասցեն է՝ Երևան, Տերյան 74:

2. Բաժնի հիմնական նպատակներն ու խնդիրները

2.1 Բաժնի հիմնական նպատակն է հանրապետության լրատվամիջոցների տրամադրել համալսարանի գործունեությանը վերաբերող լուրեր, ճշգրիտ և ստուգված փաստեր, նախապատրաստել վերլուծական նյութեր, հանրապետական մամուլում ըստ էության լուսաբանել բուհում իրականացվող կրթադաստիարակչական, գիտահետազոտական, վարչական, մշակութային աշխատանքները, նպաստել բուհում կրթական համակարգի բարեփոխման արդի պահանջների իրականացմանը, կազմակերպել համալսարանի «Հասուն ՀԱՍԿ» պաշտոնաթերթի հրատարակումը:

2.2 Բաժինը հոգ է տանում մայրենի լեզվի անադարտության մասին:

2.3 Բաժինը համալսարանի համաձայնությամբ, սահմանված կարգով, իր աշխատակիցներին կարող է հավատարմագրել պետական և հասարակական կազմակերպություններում՝ մասնակցելու և լուսաբանելու դրանց աշխատանքները:

2.4 Բաժինը, համալսարանի միջոցով, կարող է համաձայնագրեր կնքել օտարերկրյա լրատվական կազմակերպությունների և քաղաքացիների հետ:

3. Բաժնի կառավարումը

3.1 Բաժինը ղեկավարում է վարիչ-գլխավոր խմբագիրը, որին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ռեկտորը:

3.2 Բաժնի վարիչ-գլխավոր խմբագիրը կազմակերպում է բաժնի աշխատանքները և ՀԱԱՀ-ի թույլտվությամբ կարող է հանդես գալ պետական իշխանության, կառավարման և դատական մարմիններում, պատասխանատվություն է կրում բաժնի կողմից հրատարակված նյութերի հավաստիության և «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պահանջների հանդեպ:

4. Բաժնի միջոցները

4.1 Բաժինը իրավաբանական անձ չէ, ենթարկվում է ՀԱԱՀ-ին, ամբողջ գույքը և անհրաժեշտ միջոցները պատկանում են համալսարանին:

4.2 Բաժինը պատասխանատվություն է կրում հատկացված գույքի պատշաճ օգտագործման համար և կրում է նյութական պատասխանատվություն:

5. Բաժնի գործունեության դադարեցումը և լուծարումը:

5.1 Բաժնի գործունեությունը կարող է դադարեցվել, եթե այն իր գործունեությամբ չի ապահովում սույն կանոնակարգի պահանջները:

5.2 Բաժինը լուծարվում է Հայաստանի ազգային ազրարային համալսարանի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: